

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2016 ԹՎԱԿԱՆ N _ Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 13-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի, Նոր-Նորքի Գալշոյան փողոց հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքի 1-ին հարկից՝ 38.400.000 ՀՀ դրամ գնահատված արժեքով և 362.60 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքը հետ վերցնել «Երևանի N 159 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, երկամսյա ժամկետում, «Երևանի N159 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել 15.10.2013թ. կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 154/0013 պայմանագիրը սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի մասով լուծելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական

գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Երևանի N 159 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո, քառամսյա ժամկետում «Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

«Վ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

«Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» հիմնարկը հիմնադրվել է 1941 թվականին, պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ կենտրոն/ 2003թ. մարտի 21-ին վերակազմավորվել է «Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, սակայն շենք-շինություններ չի ամրացվել, և 1967 թվականից մինչ օրս ոչ բավարար պայմաններում գործում է «Երևանի N 91 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված ուսումնական մասնաշենքի կիսանկուղային հարկում:

Ընթացիկ իրավիճակը

Կենտրոնը հանդիսանալով կրթադաստիարակչական կազմակերպություն նպատակ է հետապնդում տեխնիկական ստեղծագործության և տեխնիկական մարզաձևերի խմբակների աշխատանքներին ներգրավել դպրոցականներին և նրանց տալ հայրենասիրական, հոգևոր աշխատանքային դաստիարակություն, նպաստել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում:

Կենտրոնում գործում է «Հետաքրքրաշարժ ֆիզիկա», «Սկզբնական տեխնիկական մոդելավորում», «Ռադիոկապի», «Լուսանկարչական», «Ավիա-հրթիռամոդելային», «Սենյակային թռչող գերթթեթև մոդելներ», «Տիեզերագիտական» խմբակներ:

Վերոնշյալ խմբակների գործունեությունը անխափան կազմակերպելու և նյութատեխնիկական բազան լիարժեք օգտագործելու հանար անհրաժեշտ է կենտրոնին ամրացնել նոր տարածք:

Կարգավորման նպատակը

Ի նկատի ունենալով վերոնշյալը ՀՀ կրթության և գիտության նախարարությունը առաջարկում է «Երևանի N 159 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված ուսումնական մասնաշենքի առաջին հարկից 362.60 քառ.մետր ընդհանուր տարածքը /ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված 06.06.2013թ. հ. 0283 վկայական/ հետ վերցնել և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը կնպաստի «Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության արդյունավետ կազմակերպմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«Անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման
կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ
կատարելու անհրաժեշտության մասին**

«Անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«Անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման
կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի
բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին**

«Անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների

N/ N	Գերատեսչությունների անվանումը	Առաջարկություններ և դիտողություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
1.	ՀՀ արդարադատության նախարարություն 28.12.2016թ. N01/14/17673-16	Առաջարկություն և դիտողություն չունի	
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 20.12.2016թ. N01/83-5/28248-16	Որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունեն պայմանով, որ վերջինիս ընդունումը չի հանգեցնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի հատկացման անհրաժեշտություն:	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի հատկացման անհրաժեշտություն չի առաջանա:
3.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար 21.12.2016թ. 01/15.1/5794-16	Առաջարկություն և դիտողություն չունի	
3.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 20.12.2016թ. N01/22.22/6775-16	<p>Առաջարկում է.</p> <p>1) Որոշման նախագծի նախաբանում հղում կատարել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածին,</p> <p>2) Որոշման նախագծի 1-ին կետում <Միկոյան 4/2 հասցեում> բառերը փոխարինել <Գալշոյան փողոց հասցեում> բառերով, քանի որ համաձայն N 10072013-01-0240 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի <Երևանի N 159 ավագ դպրոց> ՊՈԱԿ-ին անրացված անշարժ գույքը գրանցված է քաղաք Երևան, Նոր-Նորք Գալշոյան փողոց հասցեում,</p> <p>3) Որոշման նախագծի 1-ին և 2-րդ ենթակետերը կարդալ որպես 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետեր՝ 2-րդ կետը և 1-ին ենթակետը շարադրելով հետևյալ բովանդակությամբ.</p> <p style="text-align: center;"><2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝</p> <p>1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, երկամսյա ժամկետում, <Երևանի N 159 ավագ դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել 15.10.2013թ. կնքված անշարժ</p>	<p>1.Ընդունված է և որոշման նախագծի նախաբանում կատարվել առաջարկին համապատասխան հղում:</p> <p>2.Ընդունվել է և որոշման նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխությունը:</p> <p>3.Ընդունվել է և որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն և լրացում:</p>

		<p>գույքի անհատույց օգտագործման N 154/0013 պայմանագիրը սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի մասով լուծելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման <Երևանի N 159 ավագ դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվի,>, իսկ 2-րդ ենթակետում <սահմանելով, որ> բառերից հետո լրացնել <պայմանագրի նոտարական վավերացման և> բառերը:</p>	
<p>4.</p>	<p><< կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 19.12.2016թ. ՄՍ/7103-16</p>	<p>Առաջարկում է. Որոշման նախագծի 1-ին կետում <<Երևան քաղաքի Նորքի 5-րդ զանգված Միկոյան 4/2 հասցեում>> բառերը փոխարինել <<Երևան, Նոր-Նորք Գալոյան փողոց Երևանի հ. 159 հիմնական դպրոց>> բառերով, նկատի ունենալով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2013 թվականի հուլիսի 10-ի N 07112013-01-0176 վկայականի տվյալները և Երևանի քաղաքապետի 29.02.2008թ. N 873-Ա որոշումը, ըստ որի Երևան քաղաքի Միկոյան 4/2 հասցեն տրամադրվել է այլ գույքի: Միաժամանակ <<Տեխնիկական ստեղծագործական հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման տարածք տրամադրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ նույն հասցեում գործող դպրոցի առաջին հարկում առկա է 18 քառ. մետր մակերեսով վարձակալության իրավունքով տրամադրված տարածք (հիմք՝ <<Երևանի հ. 159 ավագ դպրոց>> ՊՕԱԿ-ի և <<Դպրոց>> ՍՊԸ-ի միջև 03.10.2016թ. կնքված N 25491 վարձակալության պայմանագիրը):</p>	<p>Ընդունվել է և որոշման նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն: Միաժամանակ հայտնում եմ , որ «Դպրոց» ՍՊԸ-ի կողմից զբաղեցրած տարածքի չի խոչընդոտի Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնվող տարածքին:</p>